

ՊԱՏԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պուլկարիոյ համար 12 Տր. Կեցանահայ 6 Սրբապետականի համար 15 Կեցանահայ 8

Աստուծոյ համար 3 Տր. Կեցանահայ 1.50

Երանցումը տողը առաջին երեսին համար 40 ս. Իսկ վերջին երեսին համար 20 սանթիմ. է. երեքին անդի անգլալեհերու համար 20 0/0 զեղչ կը լայ:

ՅԱՆՈՐԴԱ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆՎԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐ ՏՐԱՎՈՒԹԻ ՉՈՐԵՔՆԱԲԹԻ ԵՒ ՀԱՐԱԹ ՕՐԵՐԸ



Նամակ և ցրակ դրիկ հարստութեան հասցին:

Редакция на русском языке Шаржа Вадна

Redaction du journal "Cherjoum"

Արտասահմանի համար 20 ՍԱՆԹԻՄ (Պուլկարիոյ համար 15 ՍԱՆԹԻՄ)

Գրութիւնք ևս չեն տրուիր

ՀԱՐՈՒՄԻ ԲԱՏԱՆՈՐԴ ԳՐՈՒՈՂԸ ԲԱՏԱՆԳԻՆԸ ՊԵՏՔ Է ԿԱՆԿԻԿ ՎՃԱՐԷ

ՊԱՏՐՔ ՓՈԽԱՆՈՐԴԸ

Կարեններէ ի վեր Պուլկարիոյ հայութիւնը քիչ մը ակնդէտ կը սպասէր կրօնական պատերազմի մը, որ վերջնականապէս գար կարգադրել պուլկարահայ առաջնորդութեան հիւանդոտ հարցը:

Պուլի հիմնական պատրիարքը, եղբաներով ծածկուած իր իշխանութեան կատարէն, այսչափը զիտելու և ըմբռնելու կարողութիւն մը ունենալ կը թուի:

Գրանքովը: Առ առաջեալը եկաւ հասաւ: ու տեսնէք զինքը:

Տեսնէք, ու ապշած մնացինք: Մեր այս սպուշուրթեան բուն պատճառը գուցէ ան ըլլայ որ շատոնց ի վեր զրկուած Պուլի մզլոտ ու սպականարար միջնորդարին ազգեցութենէն, մոռցած ըլլանք մեր երանելի վարդապետներն ու եպիսկոպոսները:

Արեւմտ վերջուրում մըն է որ կունենանք կըր հիմա պատրիարքական փոխանորդին ի տես: Եւ իսկապէս, ամէնէն հաւատարիմ և ամէնէն հազուադիտ տրիպարներէն մէկն է թրքահայ հին կղերականութեան որ մեր մէջ կը շնչէ հիմա:

Արտասահմանը այն միջավայրը չէ սակայն ուր անձերու և իրադարձութիւններու մասին կարելի ըլլայ վերապահում կամ զգուշաւորութիւն գործածել: Վայելուած սանձարձակ ազատութիւնը՝ անվերապահօրէն քննադատելու մեղանշորհը կարծես առած է մեզ՝ հայ հրապարակագիրներուս, որոնք քիչ շատ ըմբռնած են Պուլի կաշկանդուած խղճուկ միջնորդարին անբաղձալի բարիքները:

սողակու մներէ տեսած կրած անհատնում միտանիս, բարոյական թէ նիւթական, կողքէ ու կողքէ:

Եթէ Պուլկարահայ առաջնորդութեան մը հաստատումը իր ուղղակի բարիքներն ու օգուտները պիտի բերէ գաղթականութեան, հարկ է և անհրաժեշտօրէն հարկ է որ այդ առաջնորդութեան ներկայացուցիչը ըլլայ այն անձը, զոր միջավայրն ու պայմանները կը պահանջեն: Բոլոր Պուլկարիոյ հայութիւնը այս կէտին վրայ համաձայնութիւն և համոզում գոյացնելու է. վասն զի, եթէ պաշտօնին անհրաժեշտ պահանջները լրացնող կրօնաւորը չըլլայ անորուն օժիքէն բռնելով պիտի բերենք իրեն յանձնել ստուարաթիւ համայնքի մը պատիւն ու շահը, բոլորովին հակառակը ձեռք պիտի բերենք այն արդիւնքին որուն կըստատուի տենդոս անհամբերութեամբ:

Պուլկարիոյ համար, պահանջներուն անբաւարար առաջնորդ մը ազէտ մը պիտի ըլլայ: Հիմակուրէն, նոյնքան ժողովուրդին որքան և աւելի պուլկարահայ մամուլին առագ պարտքն է այդ ազէտը չկողքացնելու միջոցները ձեռք առնել: Վերջապէս ա՛լ լեւս գիտենք թէ ի՞նչ անպատում՝ ապուշուրթին է ոչբալ սխալի մը վրայ, որուն գոյութեան մասին կանխաւ տեղեկութիւն ունէինք: Գլորութեք այդ սխալը գիտակցօրէն, երկարաշնչօրէն պատրաստելու անմտութեան մէջ:

Վահան վարդապետ Տ. Յակոբեան Պուլկարիա եկած է ոչ միայն հաստատելու պուլկարահայ առաջնորդութեան աթոռը, այլեւ երթալու ընդմեջու այդ աթոռին վրայ:

Բոլոր պուլկարիոյ հայութեան ճիգը մէկ կէտի մը վրայ պէտք է որ ամփոփուի. թող շտալու այդ մարդուն որ իր փառասիրական նիւղ ու զիտասկար այդ ձգտումին մէջ յաջողի:

Վահան վրդ. Տ. Յակոբեան չէ՛,

և յաւէտ չի կրնար ըլլալ Պուլկարիոյ առաջնորդութեան ներկայացուցիչը: Ամէն բան կը հակառակի ատոր. իր անցեալը, իր ազգ. գործունէութիւնը, իր նկարագիրը, եւ մանաւանդ իր այն ընթացքը զոր բռնեց Պուլկարիա եկած օրէն ի վեր:

Որոյ և անհերքելի պարագայ մը կայ. Պուլկարիոյ առաջնորդական աթոռը արտաքին երեւոյթով նիւթականապէս որքան պարարտ ու յանկուցիչ—պայման մը որուն համար մեր հոգեւորականները խալքախնին երկինք կը նետեն— ներքնապէս, սակայն, նոյնքան տաժանքոտ ու փշալից է: Հայ գաղութը այդ աթոռին վրայ պիտի տանի նրստեցնել մարդ մը որ կարենայ գիմանալ այդ տաժանքին ու այդ փուշին:

Վահան վրդ Տ. Յակոբեան այդ մարդը չէ՛:

Թէ ինչու, յաջորդ յողուածով մը պիտի ջանանք բացատրել:

Շաւարշ

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

Թաւրիզ Յուլիս 7ին

Այն ժամանակ երբ Թաւրիզի առաջնորդական աթոռը թափուր էր, երբ մի խելօք ու գործունեայ հոգեւոր պետի պէտք էր զգացվում, Թաւրիզի մարտիապետ, հո՞ծ խաւար միջնորդարի վրայ մի ասող փայլեց, որիլոյսը շացրեց մեր քաղաքի միամիտ ժողովուրդի աչքերը և զէպի իրան քաջեց կախարդական գրաւչութեամբ: Ժողովուրդը կուրացած այդ շացուցիչ փայլից, գրեթէ միաձայն ընտրեց փայլուն աստղը—եղիչ Վ. Մուրատեանին, բայց աւա՛ղ... մեր քաղաքացիք շարաչար սխալուած էին, որովհետեւ իրանց կարծած աստղը գիտաւոր անող էր, երեւցաւ թէ չէ, կտրեց ունցաւ անսահման տարածութիւնը և միայն մի քանի վայրկեան հետք թողեց, որից յետոյ կրկին տիրեց խաւարը, և գիշերաչիլի բուերը կրկին արշաւանքներ գործեցին, խաղաղ ու անգորր բնակչութեան վրայ:

Երբ Հայր սուրբը մեր քաղաքը ուք գրեց, իւր կրակոտ ու ոգեւորւած երեւեկայական քարոզներով ժո-

զովորի ուշքը գրաւեց... ժողովուրդը դարձեալ խաբւեց դրա քարոզչութիւնը և բոլորէ առ բոլորէ պատուէր են դրէ Մ. Վ. Մուրատեանի խօսքերի իրականացման... Ինչ կեդրոնակն զարոց հիմնել, ինչ արագատիպ մասնու բերել, իրագործու հազար ու մի տեսակ ազգագրութեան և լուսաւորութիւն ճանապարհող հաստատութիւններ հաստատել... բայց այդ բոլորը, ոչ թէ իրականացան, այլև այժմ Հայր սուրբը դրանց վրա մտածել անգամ սարսուռով է բեր, քանզի դատողութեան տակ է դնում:

Եղբէ՛ք Մ. Վ. Մուրատեանին, երբ ասում էին կողմնակի մարդիկ, թէ, Հայր սուրբ, դրանք այդքան չլուս պրտու զարթոյց գործեր չեն, տարիներ են Լարկաւոր, Հայր սուրբը, ոչ թէ Նրանց պատասխանում էր, թէ անկարելի ոչ մի բան չկայ այլ այդ պիտիների թեթև ինքն վրա ծիծաղում էր թէ՛ տակը, իսկ այժմ Հայր սուրբը թող ինքը լաւ դիտէ իւր գործունէութիւնը:

Ինչ այդ ոչինչ, Լուսաւորութիւն և կրթութիւն տարածող մեր թեմակալ առաջնորդը, որ իւր ամբողջ գոյութեամբը ներկայ էր դրան, այժմ առանց խղճահարուչութեան, առանց սրտի ցաւի թողնում է, որ մի լուսաւորութեան վայր իւր բարձրութիւնից ցած իջնի, որի անխոնջ պաշտօնեաները, հազար նեղութեամբ և ճիգ ու ջանքերով հաղիւ էին հասցրել այդ բարձրութեան: Հայր սուրբը թողնում է մարտնչութեամբ աշխարհը որ միայն յոյս էր ամբողջ Ատրպատականի և կարծես ինքը Հայր սուրբը իւր գործունէութեամբ նպաստում է կործանելու գիտութեան, սրբութեան այդ տաճարը— «Լիւաւ» թաղի դըպրոցը:

Հին հոգաբարձութիւնը հրաժարուեց նախագահի քաղաքից հեռանալու պատճառով, իսկ Լիւաւայի անտարբեր ժողովուրդը երկու ժողովից յետոյ, հաղիւ յաջողեց հոգաբարձութեանը ընտրել, այդ էլ Ատրպատականի թեմակալ առաջնորդ եղի՛ք Մ. Վ. Մուրատեան Հայր սուրբը չէ ուզում ճանաչել իբրև օրինաւոր հոգաբարձութեանը...

Ութն հոգաբարձութեանը այժմ մնում են չորս հոգի, որոնցից երկուսին Հայր սուրբը հոգաբարձական պաշտօնին ձեռնադրու չէ համարում. առարկելով թէ, անակացած վաճառականներից են, որոնք պարտք են և զըպրոցին, այնպէս որ այդ մասին անօրինութիւնէ խնդրել վեհափառ Հայրիկից և որպէս զի միւսներին էլ այդ կերպով կարողանայ փախցնել, այս առիթն է մէջ բերում— սնանկացած «Սեւան» ընկերութեան մտ եղած փողերի գանձման համար ստորագրութիւն տան, որուն չեն ուզում համաձայնել նոր հոգաբարձութեանը: Հայր սուրբի այդ պահանջները շատ անիրաւացի են, շատ լաւ կը լինի որ Հայր սուրբը զուր տեղը հոգաբարձութեան հաստատելը չը հետաձգի, որովհետեւ բաւական է այդչեն երեք շարք ընտրութիւնից անցել է... չուսափոյթ գործունէութիւն:

Հայր սուրբը զպրոցի փակելու գրել խաւոր պատճառներից մէկը համարում է զպրոցական բիւտճէի պակասելը: Դպրոցի բիւտճէից պակասում է հազար թուման, որից չորս հարիւրը լցւում է մի քանի միջոցներ ձեռք առնելուց յետոյ, իսկ վեցհարիւր թուման առանց վարանելու կարելի

է հանգանակել միայն Լիւաւ թաղից: Բայց Հայր սուրբը բարեւոք է համարում փակել զպրոցի վեցերորդ հինգերորդ, չորրորդ ու երրորդ գասարանները, ահա մի գործ որ պիտի ամեն մի հայի սրտին մեծ ցաւ պատճառի, ամէն հայի ջանք սարսուռ ձգէ... Արդե՞ք թեմակալ առաջնորդը մտածում է այդ դասարաններից զուրս եկող աշակերտների մասին, որոնք պիտի թափառին Թաւրիզի փողոցներում, կամ որոնք շատ հեշտութեամբ կուլ կրգնան տեղում քանզի դրանք միտնարներին... Ահա՛, անէ՛ք, ինչ տեսակ է կասկածարոյ մտաբերի կրթութեան գործը, մեր ժողովրդի յոյսն ու ապահովութիւնը:

Հայր սուրբը քանի ուշ չէ հաստատեցէք հոգաբարձութիւնը, որոնք ձեռք հետ ձեռք— ձեռքի տուած կաշխատանքաւոր աշակերտներին այդ ջէզերտներին սուր ճիւղներով... Եթէ ոչ կուշանայ, ժամանակը կանցնի և ուսուցչական խումբ կազմելը մի տաճանելի գործ կը լինի: Առանց էնչև ուսուցչական խումբը հետացել է այս տեղից և չուսով կրթիւթայ նա և ձեռնոյ Տ Ռաշաճեանը, որի իրեղենները կը կռնէ անօրգի հանեց: Հայր սուրբ աշխատի կատարել թէ չէ այսքան աշակերտներին պատասխան տալ հնչարան չէ և զիտես որ ժողովուրդը անուղք է նա զիտէ մարդու հետ վարելու իւր...:

Հարմ

ՆԱՍԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Մարդ սպաններու օսկանը, իրենց յատուկ ձեռնով, խօսած է Միթիկի ու միթիկի մէջ խօսող երկու անվախ, սքառասէր արձերու զէ՛ք: Չեմ գիտեր սակայն թէ պիտի զբանուին շատ ապուշներ, որոնք այդ տողերը կարդալէ վերջ, ուր բուռած է, առանց փաստի մը. թէ շնոցն դարձան թիւններ ըրած են: Իհարցնէ իւրով թէ սրայց ի՞նչ անսակ ցնդաբանութիւններ... ո՞ր է անոնց մէջ փոքրիկ նմուշը...:

Հետ չի վերջանար սակայն մարդասպաններու բոլոր խաղաղութիւնը, անոնք այդ միեւնոյն տեղը կը ենթէ զիսմամբ: Թոյլ տուէր են եղբոր որպէսզի... Հրաշալի ի՞նչ տուութիւն...:

Այդ, պիւ, մարդասպաններ, եթէ այդքան ազնիւ էք, որ թող կուտաք այդպիսի միթիկի մը սարքումին, ինչչև ուրեմն թոյլ չի տուիք Չիթեանի, որ խօսի, ինչու սպանական կարմիր կնիք նամակներով ընթերցարանի վարչութիւնը և հոգաբարձութիւնը վարչութիւնը որպէս զի գոցեն երկու արհեստներն ալ— թիւրքարանն ու վարժարանը անոր առջև: Չէ մի որ Չիթեանը գոյ էր դուստան էր, ինչո՞ւ չի թողուցիք որ ան ալ խայտառակուէր, այդեօք հիմա՞կ, նոր խելքերնիդ սուն և կաւ, որ այդ տարօրինակ թոյլտուութիւնը բերէ, Բայց չէ՛ չէ՛ պիւ: մարդասպաններ, ժամանակները փոխուած են, և եր այդ սուտերը ալ չեն անցնիր և չի պիտի անցնին:

Դուք Չիթեանը խօսեցնել չի տուիք, որովհետեւ անոր խօսքերն կը վախնայիք, կը վախնայիք այժմ, որ և եր սուտերը, և եր խաբէութիւնները անոր խօսքերովը աւելի յստակօրէն ելեւան գալով՝ ձեզի հետեւող կալք մը տնօրջտ ասպետներ

որ ասկէ քանի մը ամիսներ ասալ վերակազմաւորներէն պարկեպոս ու անկեղծ աղայ գրիչուան մութին մէջ դարանակալ ձեռած ըլլալուն համար իրենք գիրքէք Ռուսճոճի սէրը կը կարծէին՝ ձեռնէ կը քաշուին. բայց մի խաղաղութե, և եր այդ տնօրջտները ինչ կը պահէքնէ. նոյն իսկ այդ տեսակէտով իրենց ինքզնութիւնը ապացուցին՝ երբ եագմաճի մը արգար վայրոյթին առջև այդ երեք հերոսները ծակէ ծակ մտան և ստորադասը ընկրով միայն կրցան օձիքին ազատել. ու եագմաճին յայթական հետեւել խօսքերը ըսելով ապաստան գրիչնք թէ «Փառք տուէք որ ընտանիք ու զուսկներ ունէիք, եթէ ոչ վկայ Ա. Երեմիայ ալ հոս կը փոխի»:

Այսպէս, զուք պիւ մարդասպաններ, դուք միթիկն ալ չէիք ուզեր որ տեղի շնոցն այդպէս ձեր սուտելէն խաբուող ձեր անոյց բարոյական ու նիթական ուժերուն վերայ հմայուող միամիտները յանկարծ հիօսթափ չըլլան. ու ստոր համար խաղաղութե խառնութիւնը, որին սպանուցիք որ եթէ չի թիւնկին երթալ իրմէ առուտուր չպիտի ընէք, որին ալ խոտաչաք որ եթէ միթիկն կին չերթայ սուրճը իրմէ պիտի խըմէք, բայց ալ անօգուտ էին. այդ բոլոր բաները մահամբձի մը վերջին վայրկեաններ կը յիշեցնեն և եզր Չիթեանը արգիւլ, ու միթիկը տեղի ունեցաւ փաստորպէս. ուր յայտնի փաստերով պատմութեան ձեր բոլոր ստույթները, և եր խաբէութեան թիւններով միամիտներու միամտութիւնը շահագործելիդ. ու անկուր մը այս անգամ ահաւոր էր թէ նիթապէս և թէ բարոյական:

Բայց պարտ մարդասպաններ չի կործէք բնաւ որ ձեր վրայ մտահոգ և եք, ո՞չ գոյք այսինքն սակաւաթիւ փաստագրիչներ որ ձեզի բան գործ բրած էք միամիտները շահագործել ի հալու: Եր մարդասպանական կալմակերպութեան, ուրկէ շահն ունիք դուք կը ըսեմ, արդէն մեռած էք ու մենք ձեզ կը թողուք մեռելներուն քով: մեռելներուն հետ և մենք մտահոգ կ'ըլլանք միայն այն պարզա միտ ու միամիտ եղբայրներուն համար, որոնք եթէ հանէին քիչ մը դատողութիւն ընել, քիչ մը կարգալ չուտով տանք ժամանակ կորսնցնելու և զգուշացով պիտի հեռանային ձեռնէ ինչ որ յանուն ճրջ մարտութեան և յանուն մեր ազատագրութեան անհրաժեշտօրին պիտի կատարուի արդէն:

Եր

Ռուսճոճ, 20 յուլ. 1903

ՏԱՐԵԱՆ, ՀԱՆԴԻՍԻՆ, ՄԵՐ ԽՕՍԱԳՐՈՒԹԵԱՆ

«Մեզ կը յանձնէք աշխոյժ առողջ մանկութիւն մը և տարիներ վերջ կը ստանաք սերունդ մը ֆիզիքապէս վաճառ, հոգեպէս վատթարացած, աշխատութեան և աւանդը պակասած ձեռնընթացութեան ոգին, կորովը արկարացած»:

Ահա, վարժարանի տարեկան հանդէսին առթիւ, մեր արտասանած մէկ նախադասութիւնը, որ քնի մը ուսուցիչներու և ուսուցչութեան

կարծեցալ պաշտպաններու կողմէ շատ մը քաջաբուն քերութեան թաղութեան:

Այդ իմաստակ մտքերը, իրենց սովորական թեթևամտութեամբ, առանց մեր խօսածներու ամբողջութիւնը ինկատի առնել ուզելու և առանց ուշադրութիւն դարձնելու այն եզրակացութեան որուն յանգեցանք, ուզեցին ժողովրդեան ցոյց տալ թէ՛ մենք թեմ ելած ենք ուսուցիչներու անարդանք մը ընելու, և յետոյ ան իրապէս վար իջած: Այդպիսիներու հետ անօրոտ վիճարանութեան մը մտնել յանձն չպիտի առնէինք, եթէ վիճարանութեան նիւթ դարձող ստարկան ինքնին մեծ շահեկանութիւն ունեցող ինչիդ մը չըլլար հանրութեան համար: Ուստի պիտի ջանանք քանի մը բառով հոս պատկերացնել մեր խօսածներու իմաստը, ինչ որ չըրին մեր քննադատները:

Եր ժողովրդեան պարզեցիւք մեր յոյսի դաստիարակութեան վնասակար հետեւանքները, չը մոռցանք ոչ ոչ կերպով շեշտել թէ՛ այս ստոր պատասխանատուութիւնը կը ծանրանայ ժողովրդեան վրայ: Չարեաց արբիւր ժողովրդեան մէջ պէտք է փնտնել ըսելիք, և մեր միտքը աւելի բարձրայտ ընելու համար հետեւեալ օրինակը տալիք:

Վաճառական մը ըսինք, շահաւոր գործի մը ձեռնարկելու կուզէ. այդ նպատակաւ կը վարձէ շատ մը պաշտօնեաներ առանց անոնց արժանիքով զբաղելու. կարծես իրեն պէտք եղածները աւելի շնչող հակներ ըլլան: Քան թէ ունէ գործի յարմարութիւն ունեցող մարդիկ, Գործը կը սկսուի. Վաճառականը գործին հըն մուտ չէ. ոչ ալ ունէ հսկողութիւն կընէ իւր պաշտօնէից: Այս վերջիններն ալ արդէն զիրար շնն հարկաւոր մէկուր ըրած միւսը կուրէ: Քիչ ատեն յետոյ ձեռնարկը կը վիճի, հետեւանք կը ըլլայ անակութիւն: Յետեւանք որո՞ւն է. պաշտօնեաներուն, որոնք իրենց կրթած ըրին, թէ վաճառականին հասնինք, որ ոչ գործէն կը հասկնար, ոչ իւր գործին վրայ հակեց, ոչ արժանաւոր պաշտօնեաներ վարձեց, և ոչ ալ զանոնք գործելու նպատակով պայմաններու մէջ գրաւ:

Այս խօսքերէն վերջ աւելցուցինք, «Անչքաւ ալ գիտեցաք թէ բոլոր ազգեր մեծ բան կը պարտին դաստիարակութեան, սակայն ջանացած ենք երբէք մեր կրթական հաստատութիւնները զնել պէտք եղած պայմաններու մէջ, որպէս զի մեր առաջադրած նպատակին հասնինք: Անչքաւ կը փափագի իւր զուտակ մեծ մարդ ընել, և սակայն այդ քանին համար անհրաժեշտ միջոցներ չը փնտնէ»:

Ապա ժողովրդական այս հակասական ընթացքը մեկնելու համար, Եսինք թէ՛ բարեկամեցողութիւն չէ որ կը պակսի ժողովրդեան կեզմէ: Այլ պարզապէս չէ ըմբոստանութիւնը և ինչպիսի տնձեր իբր դաստիարակ պէտք է ընդունել, որմէ յետոյ կը շնչու ըրինք ժողովրդեան զարդացած դասակարգը: Եր և հայ մամուլին, որպէսզի ջանան ժողովրդեան ընդ որ խաբէութեան մէջ հակեցնել դաստիարակութեան իսկական նշանակութիւնը:

Հոս անգամ մը ևս կրկնելով թէ մեր արդի դաստիարակութիւնը շատ վնասակար հետեւանքներ ունենալու

վրայ է մեր նոր ներդրանքը. հարկ կը համարինք սա կէտը մեր ընթերցողներուն ուշադրութեան յանձնել. Մեր համոզումը այն չէ թէ արդի յոյսի գաստիարակութեան ամբողջ պատասխանատուութիւնը ժողովուրդին վրայ կը ծանրանայ. ընդհակառակը հայ ուսուցչութիւնը մեծ պատասխանատուութիւն ունի ստոր մէջ որովհետեւ չէ ըրած ինչ որ կրնայ ընել. Բնութիւն վրայ ժողովրդեան ծանրացանք, որոհետեւ հող ժողովրդեան էր որ կը խօսէինք. եւ բնական կը որ բաւական այնքան անոր թերութիւնները միայն յիշելով, ու յարմար առիթին թողնէինք սուս ւրիշներու մասին խօսել. Ուրախ ենք որ մեր պատանակիչները իրենք են որ այդ առիթը մեզ կը նմայեն:

Ինչ է գաստիարակութեան նպատակը. Տղան Ֆիլիքական, մտաւորական եւ լարոյսական կարողութիւնները համահասարակարկացնել եւ անոնց ներգաղանակ գործունէութեամբ յառաջ լսելով մարդկային սպիտակ բարութեան եւ երջանկութեան անխնայ անհրաժեշտ արարքը:

Մարդուս այս կարողութիւնները իրարու հետ այնքան սերտաւ կապուած են, որ չէ կարելի անոնցմէ մին զարգացնել անջատօրէն, առանց վերակրթութեան նպատակէն, որու կը նկատուի գաստիարակութեան միջոցաւ:

Եւ սակայն ամէն ծնող իր զաւակը վարժարանը զրկելով նպատակ ունի յոյս մտաւորական զարգացումը: Թեպէտք որ չէ այս ըմբռնումը այնպիսի մարդոց համար, որոնք շատ թերի գաղափար մը կազմած են գաստիարակութեան մասին, բայց կարծես նոյն իսկ այն գաստիարակներն ալ, որ գաստիարակի պատանակութեամբ կոչուած է, բոլորովին անստեղծ մտնական Ֆիլիքական եւ բարոյական գաստիարակութիւնը, իր պտտակահարութիւնը լիովին կատարած կը համարի, լոկ սղուռ միտքը զարգացնելով:

Ինչպէս ալ, զէն ըսինք, շատ անհնթեթ է կայծեր թէ սղուռ միտքը կարելի է զարգացնել եւ սպասուած օգուտը ստանալ, առանց իննամբ տանելու անոր Ֆիլիքական եւ բարոյական գաստիարակութեան մասին: Սակայն պահ մը ընդունինք որ կարելի ըլլայ եւ անհնթեթ թէ մտքի զարգացման իսկական նշանակութիւնը հասկցող մարդոց մարդոց պէս շարժած ենք:

Հոս անհրաժեշտ է ըսել թէ գաստիարակութեանը երկու տեսակ է. մին՝ այն զոր մարդ ինք իր անձին կուտայ, եւ միւսը՝ այն զոր ուրիշներ իրեն կուտան: Առանց մէկ կարելիութեան չունենալ, որու շնորհիւ մարդկութիւնը կ'որոգ եղած է իր նախնական վիճակէն երկելով. հետզհետէ զարգանալու յառաջ գիտման, Ուսկից զՖիլիքին է մակարեթի թէ մարդ իր մէջ ունի յառաջադիմութեան ամէն կարեւոր տարրերը: Ուրիշն ինչ պէտք է ըլլայ երկրորդ գաստիարակութեան անոր զոր մենք ուսուցնենք կուտանք՝ պայտօնը. ոչ այլ ինչ, բայց թէ մասնակց զընել այնպիսի պայմաններու եւ սերտաւարութեան մէջ որ կարող ըլլայ ինքզինքը զարգացնել, յառաջդիմել, այսինքն սղուռ ինքնազարգացման գրգիռ:

Կարծարաններու մէջ մեր հետեւած ընթացքը համաձայն է մտաւոր գաստիարակութեան այս ինչպիսի ոգույն: Մանուկներու միտքը ինչպէս զարգացնել կը կարծենք:

Իւրաքանչիւր ուսուցիչ մէկ քանի որոշ աւարկաներու վրայ կը դասախօսէ, չը մոռնալով ըսել ամեն ինչ որ գիտէ իւր ընտրած ճիշդին վրայ, պատմութեան գաստիարակութեան զգալի գոյ ընել կուտայ, թուականութեան գաստիարակութեան, խոսքի ինքնիշխանութեան կերպերը ցոյց կուտայ, լեզուի գաստիարակութեան լատեր գոյ ընել տալու ետեւէ կը ըլլայ, Բացառութիւն կը կազմեն այն ուսուցիչները, որոնք գաստիարակութեան ինքն ինքն սա որոշ համոզմամբ, թէ իրենց զխառնուր հարկաւոր պէտք է ըլլայ ոչ թէ արդիւն մտքին մէջ լեզունը այսինչ կամ այնինչ տեղեկութիւնները, այլ սղուռն մէջ կազմել մարդը, անոր գիտելու կարողութիւնը սրելով, ապա խորհրդածել, դասել սորվեցնելով, եւ ի հարկին գոհելով դասը առաջադրած նպատակներուն հասնելու համար:

Ուսուցիչները առհասարակ կամ բոլորովին անտարբերութեամբ վերաբերուելով զկայ իրենց գործը, մանկական գաստիարակութեան մը կը ընեն կամ տարեգլխուն արդիւնք մը ցոյց տալու ծիսակեր ջանքերով, կը ճշգրտին կարելի եղածին չափ շատ ծանօթութեամբ խնդրել իրենց աշակերտներուն միտքը:

Հայկ փեշուսն ան (Շարունակ չի)

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԿՐՈՒԹԵԱՆ

Ռուսուկ 9 Յուլիս 1903

Հայկական ընթերցարանի մէջ եմ. «Մշակուի վերջին թերթէն մէկի մէջ, մի առանձին հետաքրքրութեամբ, ուղագրաւ կէտ մը կը կարդայի, ժամը հազիւ զիշխրայ 9 ու կէսն էր զարկած, երբ յանկարծ ներս խօսեցին 5-6 երիտասարդներ, ձեռքերնին մէկ մէկ կ'իջարտուէին, որոնք երբ տեսան թէ ներսը ընթերցողն էր կան, սակայն մարդավայի վարեցան եւ նստելով գետեղած սթոններու վրայ կըստանային իրենց միւս ընկերներուն գալուստ: (Այս գիշեր կ'իջարտուէր խումբը վարժութիւն ունի եղեր, որ ընթերցարանին մէջ կ'ըլլար):

Ես նկատելով այդ աչքերս յոտած հապճեպով մը կը կարդայի, որպէս զի յոյս աւարտեմ ընթերցանութիւնս եւ ելլամ դուրս. մինչ քան կը շարունակէի աչքս մնալ յանկարծ աղուկով մը ներս մտաւ սողորուս թիւղարիչը. Պ. Յովհաննէս Սայեան, Ես թէ պէտք ուշադրութիւն չի դարձուցի սուկայն պարտը իր զէզէկաբանութիւնը կը շարունակէր, ալ այնպէս որ չափազանցութեան կը հասնէր. ի վերջոյ նա ըսաւ իր ընկերներուն թէ՛ «է՛յ, ո՛ւր են սղաքները, թող գան ներս ինչ կընեն կոր դուրսը, պիտի երգենք բայց այդ վերջի խօսքերը իմականջիս այնքան զիլ հնչեցին, որ հազիւ կարենալով համբերել ձգեցի թերթը ձեռքէս եւ զխաղաղ ու գաւազանա առնելով գոյս զիմեցի. երբ քս տակուն դուրս գիտէի վրայ էի, պարտը խորտոմ ձայնով կը ըրայ. «Հը՛ր, ես դիտմամբ բրի, որ անիկայ դուրս հանեմ, անիկայ...» ես յետ նայեցայ եւ նշարեցի պարտին երեսի վրայ միտեսակ ուրախութեան ժպիտ, որ կարծես քաջութիւն մըն էր ըրած:

Պարտին նկատուելով մեզ, մասնաւորապէս ինձ, դուրս հանել է եղեր: Արդ պարտն՝ ձեռքէ բացատրութիւն կը պահանջէր թէ՛ (երբ ձեռք գտար որոշած ժամէն սակաւին բաւական ժամանակ մը կար), դուք ինչ իրաւունքով ինձ դուրս պիտի հանեիք ընթերցարանէն, ուր ամէն մի հայ անհատ հաւատար իրաւունք ունի յաճախելու:

Պարտն, ձեր այդ վարժութիւն հանգիստ եւ պիտի համարձակեմ ձեր երեսին զիմեզ մակարդը չարդել: Դուք կ'ընթերցէիք ըսուած բանը չունէք որովհետեւ, եթէ կ'ընթերցէիք լինէիք այդքէն այդ բարս միջոցի շէտք դիմեր ապա՝ ներողութիւն եւայլն. եւ այլն ըսելով, կարող էիք մեզի դուրս հանել:

Մ. Պախաջեան ԱԼ ԻՆՉԵՐ ԶԵՆ ԸՆԵՐ

Այս քանի՛ քանի՛ անգամներ է տեղույս հայկական ընթերցարանի վարչութեան կարեւոր անդամներէն մին, թուրք հիւպատոսին կողմանէ կանչուելով, ինքս հարցաքննութեան կենտրոնակէտ, իբր թէ՛ ընթերցարանին մէջ Հնչակեան յեղափոխականները միշտ գոհարուցանող կուրծեանք եղեր(1):

Արդէն ժամանակ է մը ի վեր է քաղաքս հասած էին՝ իբրեւ անցորդ հերձուածի դաւանանքին պատկանող մէկ երկու հոգի որոնք՝ երբեմն երբեմն, կը փորձէին տեղույս Հնչակեան ընկերներու մէջ պատակաստիներ յառաջ լսելու, ի վնաս կուտակելու նշան, սակայն՝ բարեբարտաբար մինչեւ այսօր իրենց այդ լարած էնորիքները ի դերեւ ելած էին, տեղույս մի քանի հեղինակաւոր Հնչակեան ընկերներու շնորհիւ:

Բայց վերջերս, այդ սթէյքսթիշներու խմբակին թափթիւղակները, իրենց պետերու առած օրինակելի գաստիարակութեան, ու ստանալով ալ թէ՛ Պախաջեանի մէջ իրենց յարած ամէն ստոր էնորիքները ջուր ինկած էին, եւս առաւել կատարելով, վերջապէս գիտեր են իրենց սովորական մասնիկներու թանձր զէնքին, այսինքն երթալ թուրք հիւպատոսին ըսել թէ՛ «ընթերցարանի մէջ Հնչակեան յեղափոխականները միշտ գոհարուցանող կուրծեանքս — այս մասնիկներու մասին իրական ապացոյցներ ունիմք, որ անվիճելի է —» (2):

Ի հարկ է հայ ժողովուրդն ալ չի պիտի զարմանայ վերոյիշեալ մատնիչութիւնը լսելով. միթէ այս մ. տ. նիշներու խմբակը չէր որ, մեր ընկերներէն Պ. Սապահ-Քիւլեանը Ամերիկեան կառավարութեան իբր անիշխանական մը ներկայացուցին, եւ մի՞

(1) Թերթը հիւպատոսը պէտք է դիտնայ թէ տեղույս Հնչակեանները ընթերցարանին մէջ այդ տեսակ գոհարուցանող ոչ ունեցած են, եւ ոչ ալ պիտի ունենան. տեղույս Հնչակեան մասնաճիւղը, իր մասնաւոր ու գաղտնի ժողովասեղին ունի, թուրք հիւպատոսը այդ տեղը չի կրնայ իմանալէն յետոյ, մինչեւ իսկ ստանաններն ալ չեն կրնար իմանալ:

(2) Այդ մատնիչները իմացեր են որ, տեղույս Հնչակեանները իրենց դէմ զայրացիր են. զբուրտ ու բաւաւճօ փախեր են:

թէ վերջերս ալ հրապարակու չեն փորձեր հայոց Հայրիկին ալ մատնիչութիւն մը ընել ալ:

Ի հարկէ շատերը իմացած պիտի ըլլան, Ամերիկայի մէջ հրատարակուող «Ձայն մատնիչներու» փախարին մէջ գրուածքը, որ մատնիչներու յանձնարարութեամբ, չէզոքի դիմակի տակ կոչ կընէր հայ ժողովրդին թէ՛ հայոց Հայրիկին ստիպել տան, ամէն քաղաքի Հնչակեան մասնաճիւղերը, նոյն երկրի կառավարութեան մասին:

Միթէ՞ ասո՛ք թուրք կառավարութեան զորձակարներ չեն. Ուրեմն — այլ ինչե՞ր չեն ընէր. Արա-Շահիւր Պո. ք. 15 3 Յուլիս 1903

Պ. ՍԻՐԱԿԱՆ ԵԶԻԿԱՆԻՆ

Նկարագիրը լաւ ճանչցայ. Սաղաթեան կամ խմբակի ստեղծուելով, զրպարտուելու, դաւելու բնարանին հաւատարիմ ծառաներէն մէկն էս:

Թէեւ դերիք մէջ անյաջող. Կը յուսամ որ, մօտ օրէն ձեր շէֆերէն շէֆերներէն եւ կամ կեղծոնին անդամ վահան Շահ-Րիմանէն ոսկի մետալ մը կըստանաս այդ հրապարակային ստախոսութեանը համար. Կօշիկէդ ցած մի իջներ, Յուրբեան Խաչիկեան

ԹԵՂԵԿՑՈՒԹԻՒՆ

ԷՏԻՐՆԵՒՆ

Ընցեալ կիրակի տեղի ունեցաւ տեղույս ազգային վարժարանի պարգեւաբաշխութեան հանդէսը, շքեղութեամբ կատարեալ էր, ժողովրդական երկսեռ խումբ բազմաթիւներ մը մը ոգեւորութեամբ հանդիսատես էր լինում. հոն էր նաեւ կուսակալը իր շատ մը պարագաներով:

Մի քան տարիներէ ի վեր է որ կրթական գործը անկման մատնուած է եւ դադարած է ճշմարիտ շրջահայեաց հայ անհատներ արտագրելէ, այնքան փայլունօրէն կատարուած են հանգէսները, Տէր Արսէնի եւ կարգ մը վարպետ Գօշերու մասնաւոր հոգատարութեամբ, որովհետեւ լաւ գիտեն այդ մտկները թէ էտիրնէցին հետամուտ չէ միտու մի ներկայ ըլլալ տարեկան հարցաքննութեանց եւ ունկնդրելու թո՛ղ քընու թեմանց արդիւնքը ոչինչ ըլլայ թո՛ղ նոր սերունդն ալ Տէր Արսէնի հաւանած մարդկանց ձեռք գաստիարակութեան հոգ չէ այդ ամենը կրնան գոցուել, ժողովրդեան աչքը փայլուն հանգէսով մը ներկելով:

Բացումը կատարեց Տէր Արսէնը իր թրքամուր բանախօսութեամբ որու մէջ այնքան առաջ գնաց որ շատ մը աղօթքներ մարթիկէ վերջ այն կարմիր գազանին:

ժիշ մնաց որ աստուածն է ան մեր հայ ազգին՝ ըսեր, գտեր է կոյր և մեռած ժողովուրդը և կը խաղայ. ձայն ձուռն հանող չիկայ, հզօր ապտակ մը հարկ էր այն ազօթքը ըսող հայ կրօնականի մը բերնին, ամեն բան մի սահման ունի օ

Ներկայ հանդիսական բարեկամներէս մին որ լուսաւորեալ Յոյն մըն էր, երբ հարցուցի իր գոհունակութեան աստիճանը պատասխանեց «այս սարի, ըսաւ, ոչ Պուլիարաց և ոչ ալ Բօլիարնե. ըսուն վարժարանները չունեցան իրենց հանգէսներն, որովհետեւ այս տարին իրենց համար սուղի տարի մըն էր, իսկ դուք զարմանալին ան է թէ ինչ սրտով ելեր փառաւոր հանգէսներ կընէք երբ ձեր քաղաքացիներէն նոյնիսկ պատուաւոր ու պարկեշտ կարգ մը երիտասարդներ անարգարօքէն զնստաններու խորը կը տանջուին»։ Ամօթի կասկարմիր բան մը. չի կրցայ պատասխանել և զոյգ մը կաթիլներ սահեցան աչքերէս... օտար ազգէ մը կրած այս ճշմարիտ յանդիմանութիւնս այնքան ազդու ապէս ազդեց որ նոյն վարկեանին, վայրկեանապէս ցնցուեցայ այն մեռեալ քունէս օ

Մտածեցի թէ Պուլիարները գոնէ սուգը կը բռնեն իրենց տանջուող եզրայրներուն, Հրէաները սիրով իրենց գրաւներն են նուիրում Գրեզի արկածեալ թշուառ ազգակիցներուն համար. իսկ մենք... ինչ ըրինք այն Ծծի ահաւելի թուականին, ի՞նչ ըրինք գեռ անցեալները սահմանազիւր տառապեալներուն, ի՞նչ ենք անում հայրենիքի մշտաշարժար ժողովրդեան օ և նրանց բարօրութեան աշխատող պաշտելի հերոսներուն համար, այս օր ալ հոս 2 ամիս է որ անշնչակ դիտում ենք անարգար և անիրաւ լոկ զրպարտութեան մը զոհ անմեղ երիտասարդներու բանտերու խորը շարձարուեցնին օ Զօրաւոր ազգացուցութիւն մը միայն խնդիրը պիտի լուսաբանէ և տղայք պիտի ազատուին, երկու ամիսէ ի վեր մէկ անգամ մը միայն հարցաքննութեան կանչուեր են. հարցնող փնտրող չիկայ, մինչդեռ տէր Արսէն իր պարծենկոտ և սուտ խօստուածներով ամեն օր խաբլըբուսէ իրեն գիմոյ միասին կիները թէ հաւայտօր պիտի երթայ, վաղը պիտի խօսի վալիին եւայլն. անցեալ օր ալ ելեր ըսերէ թէ իբր թէ ուզած ըլլայ խօսք բանալու կուսակալը քննող վերաբերեալ խնդիր մը չէ այդ՝ ըսած ըլլայ. մարդ որքան ապուշ ըլլալու է հաւատարմ համար թէ փաշան ատանկ մէկ խօսք մը կըսէ, չի՛ կրնար և արդէն չըսեր, որովհետեւ գիտէ թէ ինչ կը նշագակէ կրօնական պետի մը սյդ

խօսք ըսողը գիտէ թէ կրօնական մը իր սզգի մի ուն է խնդրի համար կառավարութեան առջեւ միջամտելու լիազօր իրաւունք ունի, բայց տէր Արսէնի քսու և շողքորդ շահը այդպէս ստախօսութիւնով պաշտօնավարել կը պահանջէ. թո՛ղ խնդն բանտարկեալները տառապին թրջական այն խոնաւ ու աղտոտ ահաւելի բանտին մէջը. թո՛ղ անոնց արգայքը անօթի մնան, թո՛ղ ընտանիքնին սպասեն և համայն պարգաններին արիւն արցունք թափեն. տէր Արսէնի հօգն անգամ չէ, ան յաճախակի պարտեցները քէֆի է գնում կարգ մը ազգային ջօջերու հետ... օ

Հապա անդին մտնելի Լեւոն թմայաքճեանը օր աւուր շարունակում է իրեն շահատակութիւնները իր շնորհէ նորէն խնդն անմեղ մարդ մը ձերբակալուեցաւ պատճառ անձնական շնջիլն ատելութեան մը, կառավարիչը ճերմակ ըլլայ երեսը շունչանորդուոյն գերեզման դարձուց այն ճօխ ու զուարթ տունը. եթէ այսպէս երթայ ամեն իրեն ծուռ նայող պիտի մտնէ իբր յեղափոխական, նայինք ո՞վ պիտի ըլլայ այն արգար ու փրկարար հոգին որ պիտի գամէ այդ սինլիքոր անպիտանը... օ մեծ է Աստուածն արգարութեան օ

Շահնէ

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

«Իմանող այս օրերուն մէջ երկու նախաօդուած նուիրեր է հայերուս, մէկի մէջ կը խօսի ռուս կառավարութեան հայ եկեղեցիներու կալուածները չափշտակելու մասին, երկրորդով կը պարզէ որ կարծես Եւրոպան մոռցած ըլլայ տաճկահայաստանը, ուր կրկին քիւրտերը սկսած են զազտութիւններ ընել և կոտորածի վտանգներ կապառնան օ

— Պուլիարիոյ հայ վարժարաններուն մէջ դասերը ընդհատուած են վաքանսի առթիւ. ամեն կողմէ ալ ուսուցիչներ կը փնտառուին, Գեռ Վառնայի հոգաբարձութիւնը ուսուցչական մարմինը կազմելու համար կարգադրութիւն չէ ըրած օ

Աւելի լաւ կըլլար որ յարգելի հազարաքանութիւնը վաղօրօք ուսուցչական մարմինը կազմելու ձեռնարկներ ընէ, որպէսզի Սեպտեմբերին ստիպուած չըլլայ թափթփուքներ հաւաքել վարժարանին մէջ օ

— Պատրիարքական փոխանորդը մեկնեցաւ Տոպրիչ, հոն եւս առաջնորդական խնդրի մասին նախնական քայլերը ընելու համար օ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Պատերազմական նախարարը գաւառները կը ճամբորդէ. երբ շորս օր է որ Վառնա կը գտնուի օ

— Կառավարութիւնը սուսիկ փութիկ կը պատրաստուի գալիք երեսփոխանական ընտրութիւններու մէջ մեծամասնութիւն չահելու համար օ Ընդգրկմագիրներն ալ իրենց կողմէն պատրաստութեան մէջ են կառավարութեան ջանքերը ի գերեւ հանելու համար օ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թ Ո Ւ Ր Ք Ի Ա

Պիթօլայի մէջ Սարաֆովը ապստամբութեան դէպք պարզած է. կտրուած են հեռագրական թելերը, խորտակուած են կամուրջները և երկաթուղիին զրծերը. հաղորդակցութիւնը ընդհատուած է օ Մասնաւոր աղբիւրէ կիմանանք որ շուտով ապստամբութիւնը մեծ ծաւալ պիտի ստանայ օ

— Ռուսիոյ դեսպանը թուրք կառավարութեան ուշադրութիւնը հրաւիրելէ հայ. նահանգներու կացութեան վրայ, որ վտանգաւոր կիւրպարանք կառնէ օ

ՌՈՒՍԻԱ

Սմբողջ ռուսական մամուլը լրջութեամբ զբաղած է Յարին ուխտագնացութեամբ օ Սարովա կոչուած գիւղի մօտերը Սերաֆիմ անունով սուրբ մը գտնուելէ ետիւր օ Ու Յարը կայսերական տան շատ անդամներուն հետ միասին զացել է այդ սուրբին երկրպագութիւն տալու համար ուխտի են զացել և տասնեօ հազարներով ռուսներ օ Ոյորմն ինուսիս օ

— Պեթերպոլի մէջ կը հաղորդեն որ կովկասի բանտարկան գործադուները գեռ կը շարունակուին օ Թիֆլիսի մօտերը գործաւորներուն և զինուորներուն միջեւ բաւական խոշոր ընդհարում տեղի ունեցեր է. երկու կողմէն ալ սպաննուածներ կան օ

ԻՏԱԼԻԱ

Նոր պապ ընտրուել է կարինալ Սարտու. Սարտու երբեք Վենետիկի պատրիարք եղած է. Բամբօլայի թիկնածուն էր և բարեկամական յարաբերութեան մէջ էր իտալիոյ արքայական տան հետ օ

Գերմանիոյ համար այս ընտրութիւնը այնչափ ալ հաճելի չէ օ

ԱՄԵՐԻԿԱ

Նիւ-Եօրքէն հեռագիր մը կը հաղորդէ որ հռչակաւոր Էտիան Մ. ճառագայթներու վրայ ըրած գիտական փորձէ մը վերջ գրեթէ կուրացեր է օ Բժիշկերը պատվիրած են բոլորովին փորձով չղբաղիլ օ Իրեն պատրաստիչ օգնականին ալ բազուկը կաթուածահար եղած է օ պարտաւորներ են կտրել օ իսկ միւս բազուկն ալ այնքան վտանգուած է, որ ստիպուեր են ձեռքին երէք մասը կտրել օ

ՀԱՅԿԱԿՅԱՆ ԳԻՆՆԵՐՈՒԹԻՒ ԿՐԹԱՐԱՆ

ԵՐԿՍԵՌ ԿՐԹԱՐԱՆ

Հայկազեան կրթարանն իր Ետարեշրջանը կը սկսի Օեպ. 1/14 ին՝ Բ. շաբթի օր օ Գիշերօթիկներու և անոնց վերաբերեալ մանրամասնութեանց համար պէտք է անմիջապէս դիմել Տրնօրէնին. քանզի 12 15 տղոց և 6 8 աղջկանց համար միայն տեղ ունինք, ուրոյն և յարմար չենք բու մէջ, մեր անմիջական հսկողութեան տակ օ

Հայկազեան կրթարան կառնողէ զուտ ազգային, բարոյական և բարձրագոյն կրթութիւն մը, ժամանակիս արդար պահանջին համեմատ օ Այսպէս և՛ ուսանողները կընդունին նախնական պատրաստութիւն՝ Եւրոպիոյ և Ամերիկայի բարձրագոյն գալոց ներու համար օ Սոյն պատճառաւ՝ Հայկազեան կրթարանը՝ ստիպուական ըրած է, քաղաքակրթ աշխարհի ամենակարեւոր լեզուներէն՝ Պրանսերէնը, Անգլիերէնը և Գերմաներէնը օ Դասատուները (մին եւրոպացի) ուսում առած են Անգլիա, Զուրիցերիա և Գերմանիա օ

Տնօրէն Հասցէ Հայկ Ե. Ետարեման Թիլիպի

Յ. Գ.— Տորեկօթիկներն ալ գիմելու են արձանագրութեան համար՝ առտուները ժամը 10-12 օ

ԳԻՆՆԵՐՈՒԹԻՒ ԿՐԹԱՐԱՆ

Տէր և Տիկին Գայանան կընդունին թոշակաւոր հայ պատանիներ, կուսան անոնց հայկականին կտր Զուրիցերիական առողջ դաստիարակութիւն, կը պատրաստեն զանոնք իրենց տարիքին և ընդունակութեան յարմար դասընթացներու քաղաքի վարժարաններուն մէջ, կապակցին ընտանեկան խնամք և գոհացուցի յաջողութիւն օ Մանրամասնութեանց համար անյապաղ դիմել առ Յ. Գայանան 47 Բաննէկուրաս (Սուրի)

Отговорникъ Мурадъ-Ераносянъ Печатница „Взвимость“ Варна